

I hereby endorse

Rector/Director _____
“ _____ ” _____ 201_

DOCTORAL PROGRAMME SELF-ASSESSMENT

_____ **YEREVAN STATE ACADEMY OF FINE ARTS** _____
(Name of the Institution)

_____ **ART HISTORY, ARTS, DESIGN, APPLIED ARTS** _____
(Name and code of the specialty)

_____ **YEREVAN, ISAHAKYAN STR. 36** _____
(Address of the Institution)

YEREVAN 2016

Composition of the self-assessment working group

Name, Surname	Position	Responsibility in the group
Nazenie Garibian	Head of the Research Center	
Mkrtich Ayvazyan	Deputy-Rector	
Anahit Ohanyan	Scientific Secretary	
<i>Please insert rows, if necessary</i>		

CONTENT

1. Institutional strategies	4
2. Doctoral program	6
3. Admission Policy.....	10
4. Supervisor.....	12
5. Research Environment	13
6. Doctoral Candidates	15
7. Internationalization.....	16
8. PhD awarding	16
9. Internal quality assurance	17
SWOT analysis of the doctoral program.....	18

Note: each standard should be assessed separately (e.g. 1.1; 1.2; 1.3...)

1. Institutional strategies

The Higher Education Institution's (hereinafter HEI) research strategy is in concord with its mission and goals.

Please mention the research ambitions of the HEI and describe the formation of research strategy reflecting the ambitions of the HEI in research.

1.1 HEI has a research strategy that is adopted at the institutional level of the HEI, represents the institution's mission and its goals for research.

a. Բուհի հետազոտական առաքելությունն է՝ զարգացնել արվեստի հետազոտությունը՝ նպաստելով գիտա-ստեղծագործական մտքի եւ ազգային մշակույթի տարածմանը:

b. Մշակվել է հաստատվել է բուհի 2017-2021 թթ. Ռազմավարական ծրագիրը (Ռազմավարական ծրագիր, doc. 1), որտեղ հետազոտությունը ներառնված է որպես առանձին նպատակ (տես նպատակ 3): Այստեղ մանրամասն ներկայացված են բուհի հետազոտության ռազմավարությունը եւ զարգացման ուղղությունները: Ռազմավարական գերակայություններն են՝ հետազոտության եւ դասավանդման փոխկապակցությունը, արտաքին կապերի ընդլայնումը, հետազոտության միջազգայնացումը, հետազոտական թեմաների թիրախավորված եւ ադապտացված սահմանումը՝ ըստ բուհի առաքելության եւ ռեսուրսների, ըստ ոլորտային արդի միտումների եւ կարիքների եւ ըստ մրցունակության ապահովման պահանջի: Դրանք լիովին համապատասխանում են բուհի տեսլականին, հետազոտական նպատակներին եւ առաքելություններին: Բուհի առաքելության մեջ սահմանված է նաեւ Ասպիրանտական (doctoral) կրթական ծրագրի մշակումը եւ շարունակական բարելավումը:

Ըստ այդմ՝

c. Ստեղծվել է Արվեստի եւ հումանիտար հետազոտությունների կենտրոն (Research Center for Arts and Humanities) (այսուհետ՝ **Կենտրոն**), որը հավակնում է լինել միջգիտակարգային (interdisciplinary):

d. Կենտրոնը մշակում, կենտրոնացնում եւ համակարգում է բուհի հետազոտական գործունեությունը, ինչպես նաեւ՝ ասպիրանտական ծրագիրը եւ ուսումնական պլանը: Կենտրոնի գործունեությունը բխում է ինչպես բուհի ռազմավարական ծրագրի նպատակներից, այնպես էլ Տեմպուսի Վերիտաս ծրագրի պահանջներից:

1.2 Research strategy reflects the needs of the internal and external stakeholders and includes ethical concepts.

a. Բուհի հետազոտական Կենտրոնը մշակել է մանրամասն եւ թիրախավորված ռազմավարական ծրագիր (**տես. doc. 2, Հետազոտական կենտրոնի ռազմ., հետազոտ. ուղղությունները եւ ծրագրերը**) եւ սահմանել է բուհում կիրառվելիք հետազոտական ուղղությունները՝ առաջիկա հինգ տարիների համար՝ հենվելով բուհի հետազոտական

առաքելության եւ հետազոտական ռազմավարության վրա, հաշվի առնելով բուհի մարդկային եւ նյութական ռեսուրսները, միջազգային մակարդակով արվեստի հետազոտության ոլորտում արդի իրավիճակը, ժամանակակից խնդիրները, զարգացման միտումները եւ մրցակցություն ապահովող ոլորտներն ու թեմաները:

b. Կերպարվեստի, դիզայնի եւ կիրառական արվեստի ոլորտների համար Հայաստանում **առաջին անգամ** բուհի հետազոտական կենտրոնը մշակել է հետազոտության ուղղություններ, սահմանել է զարգացման միտումները եւ ընտրել է թիրախավորված թեմաներ, որոնք պետք է ապահովեն եւ բուհի առաքելության իրականացումը հետազոտության ոլորտում, եւ տեղական ու միջազգային մակարդակով մրցունակությունը:

c. Բուհում արվեստի հետազոտության զարգացման, հետազոտական աշխատանքների կատարման եւ կոորդինացման համար բուհը այս տարվանից նախատեսում է բյուջեով հստակ սահմանված անվանական տոկոսային մասնաբաժին:

1.3 HEI has formal mechanisms and procedures to evaluate the effectiveness of research strategy and to further improve it.

a. Կենտրոնի աշխատանքները տարեկան կտրվածքով պլանավորված են, կատարվում է եռամսյակային եւ տարեկան հաշվետվություն, ինչն ապահովում է աշխատանքների մշտադիտարկումը եւ գնահատումը (**տես doc. 3 եւ 4, Կենտրոնի տարեկան պլանը եւ տարեկան հաշվետվությունը**):

b. Այս տարվանից ներդրվել է հիմնական եւ համատեղությամբ աշխատող դասախոսների համար հետազոտական սահմանված թեմաների ներկայացման փորձառությունը՝ նվազագույնը մեկ, առավելագույնը՝ երեք տարվա համար: Թեմաները պետք է ընտրվեն բուհի եւ կենտրոնի մշակած հետազոտական ուղղությունների սահմաններում:

c. Բուհը հրատարակում է գիտական Տարեգիրք, որտեղ տպագրվում են բուհի դասախոսների եւ ուսանողների հետազոտական աշխատանքի արդյունքները (**doc. 4, Yearbook**):

d. Բուհը դասախոսներից պահանջում է տարեկան հաշվետվություն՝ կատարած հետազոտական աշխատանքի վերաբերյալ: Այդ հաշվետվությունը վերլուծության է ենթարկվում կենտրոնի եւ գիտական մասի կողմից:

e. Գնահատման մեխանիզմներից մեկն էլ բուհում ընթացող ներքին եւ արտաքին հետազոտական դրամաշնորհային ծրագրերն են:

2. Doctoral program

The doctoral program's ambitions are in concord with the institution's research strategy, forms part of institutional planning and resource allocation, is designed to meet new challenges and needs of global labour market.

Please analyze how the doctoral program intended learning outcomes are achieved (stressing student progress).

2.1 Doctoral program is thoroughly formulated, according to the intended outcomes, is flexible, meets the needs of doctoral candidates and is in line with the institution's research strategy.

a. Արվեստի հետազոտության դոկտորական նոր ծրագիրն ամբողջությամբ կազմվել է՝ նախապես սահմանված վերջնարդյունքներին համապատասխան: Ծրագրի նպատակները եւ հետազոտական թեմաների շրջանակը բխում են Կենտրոնի սահմանած ռազմավարական նպատակներից եւ հետազոտության ուղղություններից, որոնք էլ իրենց հերթին մշակված են բուհի նպատակների եւ առաքելության շրջանակներում (**տես doc. 5 Ծրագիրը**):

b. Ծրագրի մշակման գործընթացը եւ կիրառումը իրականացնում են երկու կառույց՝ հետազոտական կենտրոնը եւ գիտական մասը: Ծրագրի մշակումը ներառված է հետազոտական կենտրոնի եւ գիտական մասի տարեկան աշխատանքային պլանում, որտեղ սահմանված են նաեւ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները:

c. Ծրագրի վերջնարդյունքները սահմանված են՝ հաշվի առնելով ՈԱՇ-ի սահմանած՝ *Հետազոտողի որակավորումների շրջանակը*, ՈԱԿ-ի առաջարկած՝ *Հետազոտական ունակությունների զարգացման սանդղակը*, բուհի ռազմավարական նպատակները եւ հետազոտական հավակնությունները, Կենտրոնի մշակած ռազմավարական ծրագիրը եւ հետազոտության ուղղությունները: Կազմվել են ծրագրի վերջնարդյունքների եւ ՈԱՇ-ի մշակած՝ *Հետազոտողի որակավորումների շրջանակի*, ինչպես նաեւ ծրագրի վերջնարդյունքների եւ ՈԱԿ-ի առաջարկած՝ *Հետազոտական ունակությունների զարգացման սանդղակի* համապատասխանության համակարգված տախտակները (**տես doc. 6. NQF-program outcomes**)

d. Ծրագրի եւ ուսումնական պլանի տրամաբանական ընթացքը կառուցվել էւ ըստ տարիների բաշխվել է՝ հաշվի առնելով.

- ասպիրանտական կրթության ուղղվածության երեք հիմնական կողմերը, որոնք են՝ ուսանողակենտրոն ուսուցումը, ինքնուրույն հետազոտողի կամ արվեստագետ-հետազոտողի կայացումը, ինքնատիպ հետազոտության միջոցով նոր գիտելիքի ստեղծումն ու մեկնաբանությունը, ինչպես նաեւ՝ արվեստում նորարարական-փարձարարական տեխնիկաների եւ տեխնոլոգիաների առաջադրումը:
- ուսումնառության որակի ապահովման երեք բաղադրիչները, որոնք են՝ գիտելիք, ունակություն (կարողություն), հմտություն
- Որակավորման ազգային շրջանակի առաջարկած՝ *Հետազոտական ունակությունների*

զարգացման սանդղակը, որ ներառում է վեց փուլ, որոնցից յուրաքանչյուրն ունի հինգ աստիճան:

•
e. Ծրագրի անունն է՝ **Արվեստի տեսական եւ գործնական հետազոտական ծրագիր** (*արվեստի պատմություն եւ տեսություն՝ արվեստաբանություն, եւ գեղանկար, քանդակ, գրաֆիկա, դիզայն, կիրառական արվեստ մասնագիտությունների համար*)

f. Ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով.

- ուսումնառության վերջնարդյունքները
- ուսումնառության երրորդ աստիճանի վերաբերյալ Զալցբուրգյան սկզբունքները,
- բուհի հետազոտական գործունեության ռազմավարությունը
- հետազոտական Կենտրոնի մշակած ռազմավարությունը, գործունեության ծրագիրը եւ հետազոտության ուղղությունները:
- արվեստի հետազոտության ոլորտում առկա այժմեական խնդիրները, չուսումնասիրված ոլորտները, արդիականությունը՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային համատեքստում:
- ուսանողակենտրոն մոտեցումը:
- միջազգային մակարդակով բուհի մրցունակության ապահովումը
-

g. Ծրագիրը ճկուն է, որովհետեւ բաղկացած է **երկու առանձին բաժնից**, որոնք ներառում են առավել ադապտացված եւ թիրախավորված պահանջներ եւ համահունչ են բուհում տրվող մասնագիտական պատրաստվածության որակավորումներին. 1 - արվեստի պատմություն եւ տեսություն, 2 - կերպարվեստ, դիզայն եւ կիրառական արվեստ:

h. Ծրագրի երկրորդ՝ **կերպարվեստի, դիզայնի եւ կիրառական արվեստի** բաժինը Հայաստանում **բոլորովին նոր երեւոյթ է** եւ **առաջին անգամ** ներկայացնելու է այս մասնագիտությունների գծով ասպիրանտական կրթության բովանդակային առաջարկ, որտեղ ընդգրկված են ընդունելության, թեզի կատարման եւ պաշտպանության վերաբերյալ նոր պահանջներ:

Ըստ այդմ՝ ստեղծագործական-կատարողական մասնագիտությունների գծով թեզը ներկայացնում է ոչ թե արվեստաբանական հետազոտություն, ինչպես դա արվում էր մինչեւ այժմ, այլ ստեղծագործական նախագծի առաջարկ եւ այդ նախագծի շուրջ կատարված հետազոտական գրավոր աշխատանք՝ ավարտագիր: Կերպարվեստի, դիզայնի եւ կիրառական արվեստի հետազոտության կրթական բաժինը մշակվել է՝ արվեստի հետազոտության ոլորտում միջազգային փորձի եւ այսօրվա կիրառության ուսումնասիրության հիման վրա, ինչը համահունչ է գլոբալ աշխատաշուկայի մարտահրավերներին եւ հնարավորություն է տալիս բարձրացնել բուհում արվեստի հետազոտության մրցունակության աստիճանը:

Բուհի ստեղծագործական ամբիոնները մասնակցել են ծրագրի երկրորդ բաժնի համար հետազոտական ուղղությունների սահմանման աշխատանքներին՝ առավել արդյունավետ դարձնելով ծրագրի նպատակների եւ բուհի մասնագիտական ռեսուրսների համապատասխանությունը: Ծրագրի հաջող գործարկման դեպքում այն մեծապես կնպաստի արվեստի ոլորտում կատարվող հետազոտական աշխատանքի եւ որակյալ կադրերի

<p>պատրաստման խնդրի բարելավմանը, ինչպես նաև <u>օրինակ կճառայի</u>՝ մյուս ստեղծագործական բուհերի համար:</p> <p>i. Նոր ծրագրի ներդրումը հնարավորություն կտա ապահովել նաև ասպիրանտ-ուսանողների փոխշարժունությունը եւ կազմակերպել համատեղ ղեկավարություններ կամ համատեղ ասպիրանտական ծրագրեր:</p>
<p>2.2 Doctoral program is contextually coherent with other relevant doctoral programs. բուհում չկան այլ ասպիրանտական ծրագրեր</p>
<p>2.3 Doctoral program is functioning in the context of a strong research environment ensuring critical mass of researchers and relevant resources promoting interdisciplinary approach.</p> <p>a. Կենտրոնի մշակած ռազմավարական ծրագիրը ենթադրում է միջոլորտային (interdisciplinary) մոտեցում, որի հիման վրա էլ կազմվել է ծրագրի հետազոտական ուղղությունների եւ թեմաների շրջանակը: Բացի արվեստի տարբեր ճյուղերի միջև նախատեսվող հետազոտական թեմաներից, խրախուսվում են նաև արվեստի եւ հումանիտար գիտությունների միջև կատարվող հետազոտությունները:</p> <p>b. Ծրագրի ուսումնական պլանում ներառնված են այնպիսի առարկաներ եւ դասընթացներ, որոնք խրախուսում են միջոլորտային հետազոտությունը (տես doc. 7, Ուսումնական պլան)</p> <p>c. Կենտրոնը աշխատանք է տանում.</p> <ul style="list-style-type: none"> • միջազգային եւ տեղական դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու ուղղությամբ, որոնք կապահովեն ուսանողների շարժունությունը եւ հետազոտության կրիտիկական զանգվածը, • տեղական եւ արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու ուղղությամբ՝ համատեղ ծրագրեր կամ համատեղ ղեկավարություն իրականացնելու համար, • հետազոտության ոլորտի միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ, որոնք ներառում են զեկուցումներ, քննարկումներ, հրավիրյալ դասախոսություններ, հանդիպումներ, ճանաչողական ճամփորդությունների ներկայացում, նաև ուսանողների մասնակցությամբ: • բուհի ասպիրանտների փոխշարժուն ուղղությամբ. ուսանողները ամեն տարի ներկայացնում են իրենց թեզի եւ հետազոտական խնդիրների շուրջ զեկուցումներ, որոնք քննարկվում են ղեկավարների եւ ուսանողների ներկայությամբ: <p>d. Կենտրոնը աջակցում է ասպիրանտներին՝ մասնակցելու տեղական եւ միջազգային գիտաժողովներին:</p> <p>e. Նոր ծրագիրը համահունչ է դառնում արվեստի հետազոտության ոլորտում եւրոպական դոկտորական կրթության տեսլականին եւ չափանիշներին, ինչը հնարավորություն կտա միջազգային մակարդակով համագործակցություն ծավալել այլ արվեստի բուհերի եւ ծրագրերի հետ:</p>
<p>2.4 Doctoral program provides training in core discipline areas and transferable skills and ensures an</p>

active involvement of doctoral candidates in research activities.

- a. Ծրագրի Ուսումնական պլանը կազմվել է ծրագրի վերջնարդյունքների հիման վրա: Ըստ այդմ՝ կազմվել են վերջնարդյունքների եւ ուսումնական պլանում ընդգրկված մոդուլ-դասընթացների, ինչպես նաեւ՝ որակավորման նկարագրիչների եւ մոդուլ-դասընթացների համապատասխանության համակարգված տախտակներ (**տեւ doc. 8, Curriculum-Outcomes**)
- b. Ուսումնական պլանը կազմված է երեք կիսամյակի համար (36 կրեդիտ ծավալով), ունի չորս կրթական բլոկ-մոդուլ, որոնցից յուրաքանչյուրը ներառում է երեք դասընթաց: Նախատեսվում են նաեւ կամրնտրական (optional) դասընթացներ: Այդ մոդուլ/բաժինները հետեւյալն են.
- Հետազոտական գիտելիք եւ հմտություններ
 - Լեզվական եւ տեղեկատվական գիտելիք եւ հմտություններ
 - Դասավանդում եւ դեկավարում
 - Մասնագիտական խորացված գիտելիք եւ հմտություններ
- c. Մոդուլներում ընդգրկված դասընթացների տրամաբանական ընթացքը համապատասխանում է ուսումնառության որակի ապահովման երեք բաղադրիչների եւ հետազոտական ունակությունների զարգացման սանդղակի տրամաբանական ընթացքին:

2.5 Doctoral program has set criteria on the assessment of the quality of research results against achieved outcomes and mechanisms for the evaluation of the research results' social impact

- a. Կազմվել են ծրագրի վերջնարդյունքների եւ ՈԱՇ-ի մշակած՝ *Հետազոտողի որակավորումների շրջանակի*, ինչպես նաեւ ծրագրի վերջնարդյունքների եւ ՈԱԿ-ի առաջարկած՝ *Հետազոտական ունակությունների զարգացման սանդղակի* համապատասխանության համակարգված տախտակները (**տեւ doc. 6. NQF-program outcomes**)
- b. Կազմվել են վերջնարդյունքների եւ ուսումնական պլանում ընդգրկված մոդուլ-դասընթացների, ինչպես նաեւ՝ որակավորման նկարագրիչների եւ մոդուլ-դասընթացների համապատասխանության համակարգված տախտակներ (**տեւ doc. 8, Curriculum-Outcomes**)
- c. Ընդունելությունից հետո ուսանողը պետք է կատարի "learning needs analysis, which enables her/him to reflect on existing competences and identify areas in need of development", որի արդյունքում կկարողանա հստակեցնել իր թեմայի շրջանակները, որակական պահանջները եւ վերնագիրը:
- d. Հիմնական դեկավարը եւ ասպիրանտը, պայմանագրի ստորագրումից հետո մինչեւ ատենախոսության հանձնումը, պարտադիր կերպով պարբերաբար հանդիպում են: Հանդիպումներն արձանագրվում են հատուկ այդ նպատակով կազմված հանդիպման թերթիկում (**տեւ doc. 10, Աշխատանքային հանդիպման տեղեկագիր**):
- e. Հետազոտության որակական արդյունքները գնահատվում են տարեկան ատեստավորմամբ, որի ժամանակ ուսանողը հաշվետվություն է ներկայացնում իր արած աշխատանքի մասին: Այդ հաշվետվությունը պետք է համեմատվի ծրագրի վերջնարդյունքների հետ, ինչպես նաեւ՝ Ուսումնառության որակի ապահովման երեք բաղադրիչների եւ Հետազոտական

ունակությունների գարգացման սանդղակի տրամաբանական ընթացքի հետ:

f. Նոր ծրագրով նախատեսվում է տարեկան հաշվետվություն նաեւ դեկավարի կողմից, ինչպես նաեւ նրա գնահատում/կարծիքը՝ ուսանողի հաշվետվության հետ:

g. Հանդիպման տեղեկագրերը տարվա կտրվածքով նույնպես ներկայացվում են ատեստավորման հանձնաժողովի նիստին:

h. Ուսումնառության արդյունքները գնահատվում են քննություններով, քննական տեղեկագրերը հաշվետվություններին կից ներկայացվում են տարեվերջի ատեստավորման նիստին:

i. Կերպարվեստի, դիզայնի եւ կիրառական արվեստի բաժնի համար, բացի տեսական հրապարակումներից, ներառնված են նաեւ ցուցահանդեսները կամ այլ արվեստի միջոցառումները որպես որակի ստուգման չափանիշ:

j. բուհում գործող կարիերայի կենտրոնի հետ համատեղ նախատեսվում է շրջանակել պաշտպանությունից հետո երիտասարդ դոկտորի կարիերան եւ գիտական ու հասարակական առաջընթացը:

2.6 There are set mechanisms and procedures in place to ensure development, approval, monitoring and periodic review of doctoral program with an active involvement of internal and external stakeholders.

Այս մեխանիզմները դեռեւս մշակված չեն, քանի որ նոր ծրագրի մշակման գործընթացը չի ավարտվել եւ պիլոտ-ծրագիրը դեռեւս չի ներդրվել բուհում: Նախատեսվում է մշակել բուհի Որակի կենտրոնի հետ համատեղ:

3. Admission Policy

HEI's admission policy on doctoral program is transparent, is in line with doctoral program's ambitions.
Please analyze whether the selection mechanisms of doctoral candidates are aligned with the doctoral program's ambition.

3.1 HEI has set mechanisms for promoting equitable recruitment, selection and admission procedures.

a. Նոր ծրագրով մշակվել է ընդունելության նոր կարգ, Այն լավագույնս է արտահայտում ծրագրի նպատակները, թիրախավորված է եւ թույլ է տալիս առավել արդյունավետ կերպով ապահովել ընթացակարգի թափանցիկությունը եւ դիմորդների ճիշտ ընտրությունը:

b. Ընդունելության համար դիմորդները պետք է ներկայացնեն հետազոտության առաջարկ-կոնցեպտ (research proposal), որը նորույթ է Հայաստանում: Նախքան ասպիրանտուրա ընդունվելը թեմայի շուրջ կողմնորոշվելը եւ հետազոտության առաջարկ ունենալը հնարավորություն կտա նախ՝ ճիշտ եւ թիրախավորված մոտեցում ցուցաբերել դիմորդների

ընտրության հարցում, ապա՝ բավական ժամանակ շահել եւ այդ ժամանակը օգտագործել արդեն ուղղորդված հետազոտական աշխատանքը սկսելու վրա:

c. Նոր ընդունելության կարգը տարբեր սկզբունքներ եւ պահանջներ ունի արվեստի պատմության եւ տեսության եւ ստեղծագործական-կատարողական մասնագիտությունների գծով դիմորդների համար:

d. Արվեստի պատմության եւ տեսության մասնագիտության գծով ընդունելության համար նոր կարգը նախատեսում է.

- Հետազոտության թեմայի նախնական առաջարկ-կոնցեպտ, որը ներառում է ուսումնասիրվող թեման, հետազոտական խնդիրը, դրա արդիականությունն ու նորարարությունը, դրա կատարման մեթոդն ու եղանակները, թեմայի շուրջ ընդհանուր մատենագիտություն:
- Երաշխավորագիր՝ տվյալ բնագավառում ճանաչված մասնագետի անունից (*երաշխավորագիրը պետք է էլեկտրոնային փոստով ուղարկվի ուղղակիորեն գիտական քարտուղարին*)
- Մոտիվացիոն նամակ
- Առնվազն մեկ հրապարակած գրավոր շարադրանք (նվազագույնը 10 էջ):
- Մագիստրոսական թեզի պաշտպանության գնահատականը եւ ընդդիմախոսի կարծիքը
- Դիմորդը պետք է անցնի հարցազրույց, որտեղ կցուցաբերի արվեստի պատմության վերաբերյալ ընդհանուր եւ իր թեմայի շուրջ կոնկրետ գիտելիքներ, մտքերը բանավոր ձևակերպելու կարողություն, արվեստի բնագավառում հետազոտություն կատարելու շուրջ պատկերացում:

e. Ստեղծագործական-կատարողական մասնագիտությունների գծով ընդունելության նոր կարգը նախատեսում է.

- Հետազոտության ստեղծագործական-կատարողական նախագծի կոնցեպտ, որտեղ արտահայտված կլինեն հետազոտության բուն թեման եւ գաղափարը, դրա գեղարվեստական-պատմական համատեքստը եւ հիմնավորումը, գեղարվեստական լուծման տարբերակները, հորինվածքային, ոճական եւ նյութատեխնիկական արտահայտչամիջոցները:
- Վերջին շրջանում կատարած աշխատանքների պորտֆոլիո եւ, եթե առկա է, մասնակցած ցուցահանդես/ների մասին տեղեկատվություն, լուսանկարներ
- Որակավորման վերջին դիպլոմը
- Երաշխավորագիր՝ տվյալ բնագավառում ճանաչված մասնագետի կողմից
- Հարցազրույց, որտեղ պետք է ստուգվեն դիմորդի՝ հետազոտություն անելու մոտիվացիան եւ կարողությունները, իր առաջարկած նախագծի հետազոտական խնդիրների շուրջ իր պատկերացումները:

f. Դիմորդների ընտրությունը եւ ընդունելությունը կատարվում է հատուկ այդ նպատակով գումարված փոքրիկ (երեք հոգի) հանձնաժողովի կողմից, որոնց կազմում պետք է լինեն հետազոտական կենտրոնի տնօրենը եւ, ցանկության եւ հնարավորության դեպքում, դրսից

հրավիրյալ մասնագետ: Կերպարվեստի, դիզայնի եւ կիրառական արվեստի գծով թեկնածուների դեպքում հանձնաժողովի անդամներից մեկը պետք է լինի արվեստագետ պրոֆեսոր:

3.2 Selection criteria of doctoral candidates are transparent, publicly available and are in line with the explicit outcomes of doctoral program.

a. Ընդունելության թափանցիկությունն ապահովելու համար հանձնաժողովի անդամները պետք է կազմեն յուրաքանչյուր թեկնածուի համար մեկ էջանոց տեղեկագիր, որտեղ շարադրված կլինեն ընդունելության համար ներկայացված պահանջների բավարարման մասին գնահատող եզրակացություններ՝ ըստ սահմանված չափանիշների (**տես doc. 9, Ընդունելության տեղեկագիր՝ պահանջներ եւ գնահատման չափանիշներ**)

b. Գնահատող եզրակացությունները բաց են եւ տրամադրելի՝ դիմումի դեպքում:

c. Հետազոտական կենտրոնը եւ գիտական մասը ըստ ցանկության խորհրդատվություն են անցկացնում դիմորդների համար:

3.3 HEI periodically analyses the effectiveness of applicants' assessment system.

Առայժմ ծրագիրը չի ներդրվել, եւ նման մեխանիզմ չի գործում:

4. Supervisor

HEI provides highly qualified supervisors/well structured supervisory team to achieve doctoral program's ambitions.

Please analyze how the HEI assures sufficient supervision motivated for the implementation of doctoral program's ambition.

4.1 Supervisors/supervisory team responsibilities, qualifications, workload, recognition criteria are comprehensively stated and described and are in line with doctoral program's ambitions.

a. Նոր ծրագրով սահմանված է ղեկավարի աշխատանքի, ղեկավարի եւ ասպիրանտի համատեղ աշխատանքի կանոնակարգված, թափանցիկ եւ մշտադիտարկվող մեխանիզմ:

b. Նոր ծրագրով նախատեսվում է եռակողմ պայմանագիր՝ ուսանողի, բուհի եւ ղեկավարի միջեւ, որտեղ հստակ սահմանվում են յուրաքանչյուր կողմի իրավունքներն ու պարտականությունները (**տես doc. 10 Պայմանագիր**):

c. Մեկ ուսանողի համար նշանակվելու են երկու ղեկավար՝ հիմնական եւ ընթացիկ, որոնց աշխատանքային պարտականությունները հստակ սահմանված են ծրագրով: Կերպարվեստի, դիզայնի եւ կիրառական արվեստի գծով ղեկավարներից մեկը պետք է լինի արվեստաբան, մյուսը՝ արվեստագետ, որոնք պատասխանատու են առաջինը՝ թեզի հետազոտական-տեսական

<p>մասի եւ ավարտագրի, իսկ երկրորդը՝ ստեղծագործական-կատարողական մասի համար:</p> <p>d. Նոր ծրագրում բացի ասպիրանտի տարեկան հաշվետվությունից լինելու է նաեւ ղեկավարի առանձին հաշվետվություն՝ իր կատարած աշխատանքի համար, ինչպես նաեւ՝ նրա գնահատում/կարծիքը:</p>
<p>4.2 HEI has supervisor/ supervisory team appointment procedures.</p> <p>a. Բուհը չունի կոնկրետ ընթացակարգ, սահմանափակվում է ԲՈՀ-ի ընդհանուր պահանջներով:</p> <p>b. Բուհը չի խոչընդոտում, որ ղեկավարներն ընտրվեն այլ՝ արտաքին հաստատություններից:</p>
<p>4.3 HEI has motivation mechanisms for supervisors to be involved in active researching and be part of relevant scientific network.</p> <p>a. Այս տարվանից ներդրվում է արվեստի հետազոտության համար միջոլորտային նախագծերի ներքին դրամաշնորհային համակարգ՝ ղեկավարների, դասախոսների եւ ասպիրանտների համար:</p> <p>b. Դասախոսների ընդհանուր ժամաքանակում հատուկ ժամեր են տրամադրված հետազոտական աշխատանքի համար:</p>
<p>4.4 There is well-established system for periodic evaluation of supervision that foster to review existing policies and procedures for supervision and to reveal the professional needs of supervisors.</p> <p>a. Բացի ղեկավարների տարեկան հաշվետվությունից եւ ուսանողների հետ հանդիպման տեղեկագրերից առայժմ այլ մեխանիզմներ մշակված չեն ղեկավարական թիմի աշխատանքը գնահատելու եւ ղեկավարման քաղաքականությունը վերադիտարկելու համար:</p>
<p>4.5 HEI fosters the development and professional progress of supervisors.</p> <p>4.6</p> <p>a. Նախատեսվում է մշակել եւ տեղայնացնել ղեկավարի ուղեցույց:</p> <p>b. Նախատեսվում են հրավիրյալ դասընթաց-պարապմունքներ կազմակերպել՝ ղեկավարների համար,</p> <p>c. Նախատեսվում է օգտագործել միջազգային ծրագրերի հնարավորությունները՝ ղեկավարների արտաքին վերապատրաստման համար:</p>
<p>5. Research Environment</p> <p><i>HEI promotes the quality research provisions by creating an environment conducive to research.</i></p> <p><i>Please analyze how the HEI ensures the proper implementation of the doctoral program.</i></p>
<p>5.1 There are necessary resources for the implementation of doctoral program in accordance with its</p>

content, which effectively support the implementation of program's ambitions and create an environment conducive to research.

a. Ասպիրանտական կրթական ծրագրի իրականացման համար բացի տեսական եւ ստեղծագործական ամբիոններից եւ գիտական մասից՝ ստեղծվել է նաեւ հետազոտական Կենտրոն:

b. բուհում առանձնացվել է հատուկ տարածք՝ ասպիրանտների աշխատանքի, քննարկումների, ղեկավարների հետ հանդիպման եւ հետազոտական այլ միջոցառումների համար, որ հազեցած է անհրաժեշտ տեխնիկայով:

c. Բուհի արվեստի եւ հումանիտար գիտությունների գրադարանն ունի բավարար ֆոնդեր՝ հետազոտական աշխատանք իրականացնելու համար, որոնց թվին նաեւ արվեստի նյութերի եզակի արխիվային ֆոնդ՝ Ֆլորա Դգնունու անվամբ:

d. Կենտրոնը կազմակերպում է թվային ռեսուրսների գրադարան:

e. Ասպիրանտ ուսանողները հնարավորություն ունեն ԵԳՊԱ Տարեգրքում տպագրելու իրենց ընթացիկ հոդվածները:

5.2 HEI monitors the scientific progress of the individual doctoral candidates by achieved scientific results and provides career development opportunities. Supervisors have primary responsibility in doctoral candidate's scientific progress.

a. Կենտրոնը եւ գիտական մասը աջակցում են ասպիրանտներին տարբեր տեսակի խորհրդատվությամբ, օգնում են տեղեկատվություն հայթայթելու, գիտաժողովներին մասնակցության համար:

b. Կենտրոնը աջակցում է ուսանողներին միջազգային հանդեսներում տպագրվելու, միջազգային գործընկերների հետ հարաբերություններ հաստատելու, միջազգային հետազոտական ծրագրերին մասնակցելու եւ ուսանողների փոխանակության համար:

c. Ղեկավարները կատարում են տարեկան հաշվետվություն եւ գնահատում/կարծիք՝ ուսանողի առաջադիմության եւ հետազոտական աշխատանքի վերաբերյալ:

5.3 HEI ensures that all doctoral candidates receive useful and regular information and advice to promote research and to have opportunity to work in research teams and different research environments.

a. Կենտրոնը եւ գիտական մասը պատասխանատու են ուսանողներին կանոնավոր տեղեկատվություն եւ խորհրդատվություն հասցնելու, հետազոտական տարբեր ծրագրերում ընդգրկվելու համար:

5.4 HEI has sound financial distribution policy and capacity to sustain and ensure the integrity and continuity of doctoral programs at the institution.

5.5 HEI has mechanisms in place for the evaluation of the effectiveness, applicability and availability of resources.

6. Doctoral Candidates

Doctoral candidates are recognized as professionals with commensurate rights.

Please analyze whether the doctoral candidates are part of implementation of the HEI's ambitions in research.

6.1 HEI has formal mechanisms to regulate relations between candidate, supervisors and institution where the rights and responsibilities of doctoral candidates are clearly formulated.

Նոր ծրագրով սահմանված է ղեկավարի աշխատանքի, ղեկավարի եւ ասպիրանտի համատեղ աշխատանքի կանոնակարգված, թափանցիկ եւ մշտադիտարկվող մեխանիզմ:

b. Նոր ծրագրով նախատեսվում է եռակողմ պայմանագիր՝ ուսանողի, բուհի եւ ղեկավարի միջեւ, որտեղ հստակ սահմանվում են յուրաքանչյուր կողմի իրավունքներն ու պարտականությունները (**doc. 10**):

c. Նոր ծրագրի ուսումնական պլանը կազմված է՝ հաշվի առնելով ասպիրանտի՝ որպես երիտասարդ հետազոտողի պահանջներն ու կարիքները: Այնտեղ ընդգրկված են դասընթացներ, որոնք կոչված են զարգացնելու ասպիրանտի հետազոտական, դասախոսական եւ ղեկավարական ունակությունները:

d. Նախատեսվում է հրատարակել ասպիրանտական կրթության ուղեցույց, որտեղ հստակ ներկայացված կլինեն ասպիրանտի իրավունքները եւ պարտականությունները, ինչպես նաեւ կարգավորված կլինեն ասպիրանտ-ղեկավար հարաբերությունները:

6.2 Doctoral candidates are engaged in governance at the university and participate in decision-making.

a. Բուհը խրախուսում է ասպիրանտներին դասաժամերի տրամադրումը՝ պահանջված նվազագույնից ավել ժամաքանակով:

b. ասպիրանտները մասնակցում են Կենտրոնի աշխատանքներին

c. Ասպիրանտները ընդգրկված են բուհի տարբեր միջազգային ծրագրերի մեջ:

6.3 HEI has set mechanisms that ensure quality of the student services and doctoral candidates are involved in the quality assurance practices.

Այս մեխանիզմներն առայժմ չեն մշակված:

7. Internationalization

Internationalization is coherent with institution's research strategy and the individual needs of the doctoral candidates.

Please analyze how the HEI strives to be a part of local and international research networks by the implementation of the doctoral program.

7.1 HEI promotes fruitful and effective collaboration with local and international counterparts aiming to create critical mass and networking as well as to implement joint research and doctoral programs.

a. Առայժմ կայուն ընթացիկ համագործակցություն չի հաստատված տեղական եւ միջազգային գործընկերների հետ, սակայն մի քանի ծրագրեր եւ բանակցություններ ընթացքի մեջ են Ֆրանսիայի եւ Իտալիայի բուհերի հետ:

b. Բուհում կան ռեսուրսներ՝ անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն լեզուներով դասընթացներ եւ սեմինարներ կազմակերպելու համար:

c. Ծրագրով առաջարկվում է պաշտպանությունից հետո թեզի սեղմագիրը անգլերեն լեզվով հրատարակության պատրաստել՝ առցանց եւ տպագիր, որը Կենտրոնը կցրի համապատասխան միջազգային միջավայրերում եւ հաստատություններում:

7.2 The mobility of doctoral candidates is driven by the candidates' research projects.

Բուհն առայժմ ասպիրանտների շարժունություն չունի:

7.3 HEI allocates sufficient financial resources for internationalization.

Չնայած բուհի ռազմավարական ծրագրում միջազգայնացման խնդիրն ընդգրկված է առանձին կետով, սակայն առայժմ բավարար ֆինանսական ռեսուրսներ չեն տրամադրվում միջազգայնացման համար:

8. PhD awarding

HEI has clear mechanisms for monitoring and assessment of the research results (applicable to the institutions having Specialized Councils).

Please analyze how the Specialized Councils acknowledge the formation of an autonomous researcher.

<p>8.1 Specialized Council has PhD awarding criteria that are applied and periodically reviewed.</p> <p>Not applicable to our institution.</p>
<p>8.2 HEI has set criteria for the nomination of the members of Specialized Council/s.</p>
<p>8.3 HEI periodically implements quality assurance of Specialized Council/s' activities.</p>
<p>8.4 Specialized Council/s periodically publishes reports on the development of the relevant fields.</p>
<p>9. Internal quality assurance <i>HEI has an internal quality assurance system, which promotes continual improvement of all the processes of doctoral education.</i></p> <p><i>Please analyze how ther HEI promotes quality assurance culture for doctoral education.</i></p>
<p>9.1 There are well-established and publicly available policies and procedures for internal quality assurance of doctoral education.</p> <p>Առայժմ չկան մշակված քաղաքականություն եւ ընթացակարգ՝ ասպիրանտական կրթության որակի ապահովման համար:</p>
<p>9.2 The internal and external stakeholders of doctoral education are involved in the quality assurance processes.</p>
<p>9.3 HEI collects reliable information on the implemented processes through feedback mechanisms, which is evaluated for the improvement of the goals and processes of doctoral education.</p> <p>a. Հետազոտական կենտրոնը եւ որակի ապահովման կենտրոնը առայժմ մշակել են մեկ հարցաթերթիկ բուհի ընդհանուր հետազոտական աշխատանքների եւ ասպիրանտական կրթության համար (տես doc. 11 Հարցաթերթիկ):</p> <p>b. Նախատեսվում է իրականացնել երկու տեսակի հարցում.</p> <ul style="list-style-type: none"> բուհի հետազոտական ոլորտի համար, որում ընդգրկված կլինի ասպիրանտական ծրագիրը,

<ul style="list-style-type: none"> Նոր ծրագրի ներդրումից հետո յուրաքանչյուր կիսամյակի ավարտին՝ դասընթացների արդյունավետությունը գնահատելու համար:
9.4 The internal quality assurance system of doctoral education is periodically reviewed.

SWOT analysis of the doctoral program

	External Opportunities	External Threats
	<p>(O)</p> <p>List 4-5 External Opportunities</p> <p>1. Նոր ծրագիրը համահունչ է եւրոպական սկզբունքների եւ չափանիշների հետ, ինչը հնարավորություն է տալիս համագործակցություն ծավալել միջազգային բուհերի հետ՝ կրթության երրորդ աստիճանի սահմաններում:</p> <p>2. Օգտագործել միջազգային դրամաշնորհային ծրագրերի ընձեռած հնարավորությունը՝ ղեկավարների վերապատրաստման եւ ղեկավարի ուղեցույց մշակելու համար:</p> <p>3. Օգտագործել Erasmus+ ծրագրի հնարավորությունները՝ ասպիրանտ ուսանողների եւ դասախոսների փոխշարժունությունն ակտիվացնելու համար:</p> <p>4. Կապեր հաստատել արվեստի այլ</p>	<p>(T)</p> <p>List 4-5 External Threats</p> <p>1. Կրթության եւ գիտության նախարարությունը կարող է չընդունել ասպիրանտական ծրագրի երկրորդ բաժինը՝ ստեղծագործական մասնագիտությունների համար, որովհետեւ այն համակարգային փոփոխություն է նախատեսում:</p> <p>2. Թեզի ղեկավարության իրավունքը շնորհում է ԲՈՅ-ը եւ ոչ՝ բուհը:</p> <p>3. Ղեկավարության իրավունք ստանալու համար ԲՈՅ-ի ներկայացրած պահանջները անհամաչափ են եւ ոչ միայն խոչընդոտում են ղեկավարության կադրային քաղաքականությունն իրականացնելու համար, այլեւ կարող են բացասական անդրադառնալ ղեկավար դառնալու մոտիվացիայի վրա:</p> <p>4.</p>

	<p>հաստատությունների հետ՝ համագործակցության համար:</p>	
<p>Internal Strengths</p> <p>(S)</p> <p>List 4-5 Internal strengths</p> <p>1. Ծրագիրը ճկուն է, թիրախավորված, թեմաների շրջանակը կազմված է՝ համաձայն բուհի հետազոտության ռազմավարական նպատակների և սահմանված հետազոտության ուղղությունների:</p> <p>2. Ծրագիրը Հայաստանում առաջին անգամ առաջարկում է ասպիրանտական կրթություն՝ ստեղծագործական-կատարողական մասնագիտությունների գծով հետազոտության համար:</p> <p>3. Նոր ծրագրով մշակվել է</p>	<p>S-O</p> <p>“Max-Max” Strategy</p> <p>Strategies that use strengths to maximise opportunities</p> <p>Աշխատանք է նախատեսվում առաջարկել մյուս բուհերին՝ միացյալ ուժերով ծրագրի առաջարկ պատրաստել և ներկայացնել միջազգային դրամաշնորհ կազմակերպություններին՝ ղեկավարների վերապատրաստման և ղեկավարի ուղեցույց մշակելու համար:</p>	<p>S-T</p> <p>“Max-Min” Strategy</p> <p>Strategies that use strengths to minimise threats</p> <p>Ստեղծագործական-կատարողական մասնագիտությունների համար ասպիրանտական նոր ծրագիրը ընդունելու և հաստատելու համար dissemination policy և ռեկլամ է արվում - ուղարկվել է գործընկերներին և ԲՈՅ-ի ղեկավարությանը, անընդհատ երկխոսություն կա նախարարության հետ:</p>

<p>ընդունելության Նոր կարգ, որը ընդունելության մասնագիտական ընդհանուր քննության փոխարեն Նախատեսում է դիմորդների հետազոտության Նախագծի առաջարկ-կոնցեպտ, գրավոր հրապարակություն և հարցազրույց:</p> <p>4. Նոր ծրագրով սահմանված է ղեկավարի աշխատանքի, ղեկավարի և ասպիրանտի համատեղ աշխատանքի, ղեկավարի, ասպիրանտի և բուհի պարտավորությունների և իրավունքների հստակ սահմանված, կանոնակարգված և մշտադիտարկելի մեխանիզմ:</p> <p>5. Բուհում ստեղծվել է հետազոտական կենտրոն, որը համակարգելու և վերահսկելու է ասպիրանտական ծրագրի իրականացման գործընթացը և բավարարելու է հետազոտական աշխատանքի պահանջները:</p>		
--	--	--

Internal Weaknesses	W-O	W-T
(W)	"Min-Max" Strategy	"Min-Min" Strategy
List 4-5 Internal Weaknesses	Strategies that minimise weaknesses by taking advantage of opportunities	Strategies that minimise weaknesses and avoid threats
1		
2		
3		
4		